



Grant Thornton

An instinct for growth™

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երեւան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshtyan Str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

www.grantthornton.am

Անկախ աուդիտորի եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«ԱԳԲԱ ԼԻՉԻՆԳ» Վարկային Կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին և Խորհրդին.

Ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են «ԱԳԲԱ ԼԻՉԻՆԳ» Վարկային Կազմակերպություն ՓԲԸ-ի ամփոփ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, այդ տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները՝ քաղված «ԱԳԲԱ ԼԻՉԻՆԳ» Վարկային Կազմակերպություն ՓԲԸ-ի 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից: Մենք այդ հաշվետվությունների վերաբերյալ 06 ապրիլի 2012թ-ի մեր եզրակացությունում արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական եզրակացություն:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներում (ՖՀՄՄ): Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում «ԱԳԲԱ ԼԻՉԻՆԳ» Վարկային Կազմակերպություն ՓԲԸ-ի աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ դեկլարության պատասխանատվությունը

Դեկլարությունը պատասխանատու է աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների ամփոփ պատրաստման համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համաձայն: